

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԱՅԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԽԻՎ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.

Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տ է լ է ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւններ համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տ է լ է ֆ օ Ն № 253.

Մովսէս Յարութիւնեան Մատինեան իր որդիներանցով խորին կսկիծով յայտնում է ազգականներին և ծանօթներին իր սիրեցեալ որդու, ուսանող՝

ՎԱԽՏԱՆԳ ՄՈՎՍԵՍԵԱՆ ՄԱՏԻՆԵԱՆԻ

վաղաժամ մահվան մասին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ: Թաղումը տեղի կունենայ ներկայ մայիսի 29-ին հայրենի Բօզորէնդ գիւղում, 18 վերստ հեռաւորութեամբ Մեծ-Ղարաբաղի մօտ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պօրտ-Արտուրի շրջանը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հնազանդական պեղումները. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Քաղաքական տեսութիւն.—ՀԵՌԱՅԻՐԵՆԻ.—ՅԱՅՏՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թանգարանի համար:

ՊՈՐՏ-ԱՐՏՈՒՐԻ ՇՐՋԱՆԸ

III

Պօրտ-Արտուրի և Տալիշի մասին նաւահանգիստները նշանակութիւն ստացան միայն վերջին տասնեակ տարիներում, իբրև յարմար ապաստարաններ նաւերի համար: Պօրտ-Արտուրի ծովածոցը առաջ յայտնի էր չինական Լուչունցիու անունով և սկսեց նշանակութիւն ստանալ մի քանիսինքն տարի առաջ, երբ չինական յայտնի պետական գործող չինուշան անունով ուղարկութիւն դարձրեց այդ ծովածոցի վրա և նրան յարմարեցրեց ռազմագիտական նպատակների համար: Պօրտ-Արտուրի անունը կազմվել է պատահաբար՝ անգլիական նաւապետ Արտուրի անունով, որը 1856 թ. իր «Ալբերինո» նաւով առաջին անգամ խորխուս է գցել մինչև այն ժամանակ անյայտ եղած ծովածոցում: Իսկ մի անգամ, որ անգլիական քարտէզներում մտաւ Արտուրի անունը, այնուհետև նա նորոգութեամբ անցաւ և միւս երկիրների քարտէզներին էլ:

Պօրտ-Արտուրի բերդը սկսեց շինվել 1880 թ.ին, երբ Լիւտենանտ հրաւիրեց գերմանացի օֆիցէր Ֆոն-Հանէկէնին մասնաւորապէս հետազոտելու Պօրտ-Արտուրի շրջանը և կազմելու անհրաժեշտ շինութիւնների ծրագիր: Ֆոն-Հանէկէնի դեկլարութեամբ նոյն տարվայ աշնան սկսվեց Պօրտ-Արտուրի առաջին ամբողջական շինարարութիւնը, որի վրա մինչև 4000 հոգի կուլի էր աշխատում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՄԱՐ

Յուլիանոս շող օրերից մէկն էր. պարզապէս արեւ կանուխ առաւօտանայից այրում էր այնպէս անգթաբար, որ կարծես նրա տակ փռված չը լինէր Երեւանի բարձր, միշտ զով լինողաշարը, այլ որ և է արեւադարձային առաւելու հետո Աֆրիկայի խորքերից: Թուում էր, թէ արեւը սխալվում էր, և դժուար էլ չէր սխալվել.—ամպի ոչ մի նշույլ վաղուց չէր երևացել զեդնագոյն, շրվացած, արեւադարձային երկրի վրա, վաղուց անձրևի մի կաթիլ անգամ չէր ընկել երկրի չորացած—պապակ ծոցի մէջ: Համառոտաբար արտերը, Երբակի միակ յոյսն ու միւլիթարութիւնը, խանձված ու զեղնած, կախիլ էին տիւրը գլուխները կարճ ցօղունների վրա. գիւղ, քաղաք մատնված էին կրակի—վաղուհան օրվայ հոգսի և ապրուստի դառն անաճութեան կրակին...

Եւ աղօթում էին ամենքը...

Մենք—ես և իմ ընկերս—որպէս անմասնակից այդ ընդհանուր աղօթքին, որին, կարծես,

օրեկան: Բերդի շինութիւնը համարեա անընդհատ շարունակվում էր մինչև չինահանգիստական պատերազմը և կանցեց մինչև 80 միլիոն ռուբլի ծախք: Պօրտ-Արտուրը դարձաւ առաջնակարգ մի բերդ, որ լաւագոյն էր Չինաստանում:

Չինահանգիստական պատերազմի ժամանակ, 1894 թ.ին, հանգուցները պաշարեցին Պօրտ-Արտուրը և յարձակուձ գործելով վերջինի նրան: Մարքելով նրա մարտկոցները և արհեստանոցները, հանգուցները տարան Նապոնիա բոլոր թիւղանոթները, մեքենաները և գործիչները. իսկ մարտկոցները և նաւաշինարանները, որոնք ունէին մի քանի միլիոնների արժողութիւն, թողնվեցին անվնաս:

Այնուհետև, 1898 թ.ին, Չինաստանը որոշ համաձայնութեամբ յանձնեց Պօրտ-Արտուրը Ռուսաստանին: Պայման, որ այդ առիթով ստորագրվեց Պեկինում 1898 թ.ին մարտի 15-ին, պահպանում է իր գործիքները 25 տարի, որից յետոյ նա կարող էր վերանորոգվել կրկին: Այդ պայմանով Չինաստանը զիջում էր Ռուսաստանին Պօրտ-Արտուրի և Տալիշի մասին նաւահանգիստները և ցամաքի ու ծովի որոշ տարածութիւններ. բացի այդ արտոնութիւն է արվում միացնել այդ նաւահանգիստները երկաթուղիական գծերով Միլիտի մեծ երկաթուղու հետ:

Չինական խառնակութիւնների ժամանակ 1900 թ.ին, Պօրտ-Արտուրի չինական ազգաբնակչութիւնը փախաւ քաղաքից: Քաղաքային վարչութիւնը մի օտարերկրացի կազմութեան մէջ էր. նա կառավարում էր մի քաղաք, որ բնակիչներ չուներ: Սակայն երկար չը շարունակվեց այդ դրութիւնը: Կուլից յետոյ բնակիչները սկսեցին վերադառնալ դէպի Պօրտ-Արտուր: Բայց նրանց թողած տները, խանութները, պահեստները դարձել էին արդէն քաղաքի սեփականութիւն: Բոլոր

լոգ էլ չը կար, վաղուց փախել էինք քաղաքից և ապաստանել շրջակայ լեռները: Այնտեղ, նրանց բարձր լանջերի վրա, ուր արեւ չէր կարողանում հասնել իր բարկութիւնը, այս ու այն կողմում ցրված տաղաւարների ծածկոյթի տակ անուշ հով էր տիրում, ինչպէս անուշ էին նաև այն կաթն ու սերը, որոնցով գիւղացիք առատօրէն հիւրասիրում էին մեզ նման չլուսն քաղաքացիներին: Սարից սար, տաղաւարից տաղաւար թափառելով, մենք պտտել էինք արդէն Արագածի ծագից զառկվերները և անցել Ալաշա:

Գեղեցիկ է նա, այդ Ալաշան, իր բարձր, հարթ կատարով, իր լայնանիստ կողմով, իր շքեղ ցօղապատ արօտներով, երբ, ի հարկէ, անհամար թաղանթներ չեն փորկրում ու վերաւորում նրա կուրծքը, չեն պատում նրա գլուխը ծխի թանձր ամպերով, ինչպէս մի քանի տասնեակ տարիներ առաջ:

Մենք նստած էինք մի բարձր ժայռի համարեա ուղղահայեաց զահավէթի գլխին, լեռան կատարից փոքր ինչ ցած, և նայում էինք Երբակի անասանալ դաշտին: Ընկերս—մի մեկամաղձոտ, տխուր ուսուցիչ,—որին ես հազիւ հազ բարձ էի տալիս ինձ հետ գիւղից գիւղ և որին չէր կարողանում կենդանացնել նոյն իսկ լեռնային հրաշալիքը՝ օդը, հանդարտ մրափում էր և բիշ էր մտնում վայր գլորվի ժայռից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

I

Մինչև այժմ պատմական հարցերի ուսումնասիրութիւնը մեղմանում կարող էր պատրաստ գտնել այն նիւթերը միայն, որոնք, այսպէս ասած, հողի երեսին էին մնացել անցեալից: Բազմաթիւ են այդ մնացորդները, բայց բազմաթիւ մասին չեն: Մեր հին ձեռագիրները, աւերակ կամ կանգուն շինութիւնները ասում են շատ բան, բայց մեր ժողովրդի հին կեցութիւնը, հին կուլտուրական կեանքը մինչև այժմ էլ աղօտ, անթափանցելի ըզրի տակ է ծածկված: Պատմական գիտութեան ամենից շատ այդ կեանքի հարցերն են հարկաւոր, մինչևեւ եղած նիւթերը, հողի երեսին պահւած յիշատակարանները շատ անբաւարար են:

Մոռացված էր մի շատ կարևոր հանգամանք: Այն, որ հողի տակ էլ պահվում են յիշատակարաններ: Երբ մի երկրի համար դարաւոր իրողութիւն է, որ նրա հողը շարունակ քարաւորվում է եղել, պէտք էր, ուրեմն, այն բանն ու բերելը գային պարզապէս, թէ ինչ է մնացել հողի հաստ շերտերի տակ:

Նոր-նոր են մենք սկսում հասկանալ այս մոռացված ճշմարտութիւնը:

Չորս տարի է, ինչ էլ միայնակ կողքին Սալիկ վարդապետ Դաղեանը պեղումներ է կատարում: Այսօր էլ դեռ աշխատանքները չեն դադարել: Բայց այն ամենը, ինչ մինչև այժմ գուրս է հանվել հողի տակից, այնքան հետաքրքրական է, այնքան հարուստ ու զարմանալի, որ պեղումների տեղը—Ձուարթնոց եկեղեցին—այլ ևս չէ կարող աննկատելի մնալ: Նա ուղղակի դարձել է էլմիածնի ամենանշանաւոր տեղերից մէկը և ոչ մի ճանապարհորդ, այցելելով ամենայն հայոց Մայր Աթոռը, կարծում ենք, չի հեռանալ այդտեղից, առանց տեսնելու Ձուարթնոց եկեղեցին:

Ինչ է նա գիշերը չէր ընել.—մարդու, անապական օդի և նոյնչափ մարդու, անուշադոյր խոտերի վրա, առատաբուրդի աղբիւրների կողքին, գետնիցված գիւղական տաղաւարներն անգամ ունեն իրանց անհասկանալի անմարդու թիւները, որոնցից աստիկ ներկում էր իմ ընկերս: Բացի սրանից, նա ընտելեան տեսարանների մի առանձին սիրահար էլ չէր. ես համարեա ըմբի ընկերս նրա անագին, ծանր մարմինը գահավէժից հեռու և ծածկեցի նրան ամառային բարակ վերաբերումով՝ մի քար դնելով գլխատակին: Նա ընեց իսկոյն նախ հանդարտ մշտնջող և ապա բարձր, ունեղազոյ երաժշտութեամբ: Բարեբախտաբար շուտով շուռ եկաւ նա կողքի վրա և կորեց իր սպառնական նուազը:

Չորս կողմն տիրեց խորին լուռութիւն. սակայն լեռնային կատարների այդ խորին լուռութիւնը լինէր է անուրոշ ձայներով, գաղտնի, հազիւ լսելի շշուկով, անբացատրելի մրմունջներով: Ականջ ես դնում ակամայ այդ ձայների և չը գիտեմ—առաւօտի հեղին է արդեօք սիրային մեղմիկ երգերով համբուրում առանց բաշխելու լեռնային ծաղիկների կարմրած թըշերը, ըս սիրտդ է լսվում արագ-արագ ու խօսում ընտելեան հետ գաղտնի նոյն իսկ քեզանից, թէ հսկայ ինտուն է շնչում ծանր և կամաց ըս ականջին...

Յայտնի է, թէ ինչ աղմուկներ հանեցին Սալիկ վարդապետի պեղումները մեզանում: Ժամանակին մենք խօսեցինք այդ աղմուկների մասին, յայտնեցինք մեր կարծիքը: Այսօր նորից միտք չունենք վերադառնալու այդ հարցին: Մենք միշտ ասել ենք և այժմ էլ կրկնում ենք, որ էլմիածնի կողքին կատարված հնագիտական պեղումները ունեն իրանց իսկական կարևոր նշանակութիւնը, անկախ այն կարծիքներից ու բացատրութիւններից, որոնք պատում են նրանց շուրջը, պեղումների կատարողների և այցելուների մէջ:

Իսկ իսկական նշանակութիւնն այն է, որ հողի տակից հանված է մէկը մեր եկեղեցական հնագոյն շինութիւններից, այն էլ այնպիսի մի շինութիւն, որ, դատելով մեր պատմագիտների հիացական փառաբանութիւններից, գուցէ իր նմանը չէ ունեցել իր ժամանակին: Ահա, ուրեմն, նախ և առաջ մի շատ հարուստ նիւթ VII դարի եկեղեցական ճարտարապետութեան հանգամանքներն ու առանձնապատկերները մեր պատմագիտներին համար:

Եւ, պէտք է ասել, մինչև այսօր հենց այդ հարցերն էլ գլխաւորապէս ի նկատի են ունեցել այն մարդիկ, որոնք առիթ են ունեցել գրելու Ձուարթնոց եկեղեցու մասին: Իսկ այդպիսի գրութեան արդէն շատ կան: Սալիկ վարդապետի պեղումներով հին եկեղեցու շինութեան հետ միաժամանակ լոյս եկաւ և մի, առ այժմ դեռ-ոչ այնքան հարուստ, գրականութիւն, նուիրված այդ եկեղեցուն:

Այդ ուսումնասիրութիւնների արժեքը հասկանալու համար դեռ պէտք է նկատի առնել թէ ինչ հետեւանքներ են տուել պեղումները: Փորելով մի ամբողջ բլուր, հեռացնելով հողա-կոյտերի անագին շերտեր, Սալիկ վարդապետը բաց է արել մի մեծ եկեղեցու կտորները: Այն, միայն կտորները, մինչև հիւզը քանդված մի շինութիւն, որից գտն է մի հատ ամբողջ պատ չէ մնացել: Անյայտ աղէտը, որ վերջ է դրել եկեղեցու գոյութեան, մանրել, փշրել է ամեն ինչ—պատեր, քանդակներ, սիւններ, ծեփ: Այժմ մնացել են մի քանի կտորներ միայն—սեղանը, պատերի փոքրիկ կտորները:

Եկեղեցու ամբողջութեան մասին հասկացողութիւն կազմել անկարելի է միանգամից: Պէտք է այդ ամբողջութիւնը ստանալ այն մասն-մունք բերկրներից, այն փշրանքներից, որոնք մինչև այժմ պահված են եղել հողի տակ: Իսկ սա հեշտ բան չէ: Բայց ոչ անհաշու: Դեռ կիւլվի ասում էր, որ մի հատ ոսկորով կարելի է մի հին կենդանու կմախք վերականգնել: Այսպէս էլ ներկայ դէպքում:

Ես աչքերս հեռացրի վերջապէս տափառակից: Պարզ, սիրուն առաւօտը, լեռնային առնոյշ հովը, ցօղապատ ծաղիկները և փոքրիկ երաժիշտները, որոնք բարձրացած դաշտից դէպի վեր՝ սկսել էին ձայնել օդի մէջ և գովաբանել կեանքի ու ընտելեան անանց քաղցրութիւնը, յոյս էին ներշնչում իմ տըխրած սրտին և տրամադրում էին աւելի ուրախ մտածմունքներ...

Այդ էր ասում ինձ նաև իմ ոտների տակ փռված անասանալ դաշտի տեսարանը, ուր կեանքը եւ էր գալիս առանց որ և է ափսոսանքի: Նուրիւհան մասին: Առաւօտի ծուխը՝ որպէս մուգ-կապտագոյն վարդաղբ, դանդաղ բարձրանում էր անհամար գիւղերից և ցրվում կապտոյ, ծիրանաւոր երկնքում: Կարծես մի կախարդական ձեռք կանուխ լուսաբացին առատութեամբ խորոյններ լինէր սփռած գաղտնի երեսին՝ նրա հարթ-հաւասար միահերթութիւնը զարդարելու համար: Ես շարունակ հայեացքս պտտեցնում էի այս ու այն կողմ և շարունակ գտնում էի ծխի նոր ու նոր ամպիկներ՝ թափնված դաշտը շրջափակող լեռների ծերպերում: Իմ աջ ու ձախ կողմում, ցրված սարակողերի վրա, խաղաղ արածում էին ոչխարների հօտեր, կամաց-կամաց բարձրանալով դէպի Ալաշայի գլուխը. ներքում գիւղացիների և գրաստների խմբեր թարմ

